



FINCA®

Հաստատված է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Վարչության
31.05.2019թ. թիվ 41/2019 որոշմամբ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Բիզնես Գործընկեր» վարկերի տրամադրման պայմաններ

2019 թ. Հունիսի 03-ից վարկը կարող է տրամադրվել ԱՄՆ դոլարով

ՀԱՃԱՆՈՐԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վարկառուի նկարագիր	ՀՀ-ում գրանցված Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, ովքեր ունեն ՀՀ-ում պաշտոնապես գրանցված բիզնես և գյուղատնտեսությամբ զբաղվող մասնավոր տնտեսավարողներ:
Վարկառուի տարիք	21 տարին լրացած անձինք, ընդ որում, դիմելու պահին հաճախորդի տարիքը, գումարած ակնկալվող վարկի ժամկետը չի կարող գերազանցել 70 տարեկանը:
Նախնական պահանջներ հավանական վարկառուի նկատմամբ	<ul style="list-style-type: none"> ✓ Հավանական հաճախորդի բնակության և բիզնեսի վայրի առկայություն ՖԻՆՔԱ-ի մասնաճյուղերի ցանցի սպասարկման տարածքում, ✓ Բավարարող վարկային պատմության առկայություն, ✓ Նվազագույնը 3 ամսվա անընդմեջ բիզնես գործունեություն, ✓ Համապատասխանություն ՖԻՆՔԱ-ի սոցիալական և բնապահպանական ստանդարտներին:

ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԱՅՄԱՆՆԵՐ

Վարկի գումար	20 001 – 50 000 ԱՄՆ դոլար	50 001 – 150 000 ԱՄՆ դոլար
Անվանական տարեկան տոկոսադրույք: Հաշվարկվում է վարկի մնացորդից:	15 – 18%	14 – 16%
Վարկի տրամադրման վճար վարկը բանկերի միջոցով ստանալու դեպքում կամ կանխիկ տրամադրման վճար վարկը վարկատուի դրամարկից կանխիկ ստանալու դեպքում: Հաշվարկվում է վարկի մայր գումարից:	1.5%, առավելագույնը՝ 450 000 ՀՀ դրամ	
Վարկի սպասարկման ամենամսյա վճար (հաշվարկվում է վարկի մայր գումարից)	0,1%	
Զուգահեռ վարկերի, առավելագույն քանակ	5	
Տրանշերի, առավելագույն քանակ*	Մեկ հաճախորդի զուգահեռ «Բիզնես Գործընկեր» վարկերի առավելագույն գումարը՝ 150 000 ԱՄՆ դոլար:	
	Մեկ «Բիզնես-Գործընկեր» վարկի տրանշերի առավելագույն քանակը՝ 5:	
	*Նշումներ	

	<p>✓ Տրանշը հաստատվում է ընդհանուր վարկ՝ մեկ վարկային պայմանագիր կնքելով, սակայն տրամադրումը կատարվում է մասնակի՝ յուրաքանչյուր տրանշի համար նախօրոք հաստատված պայմանների կատարումից հետո,</p> <p>✓ Տրանշերով վարկի հաստատման դեպքում գրավի պայմանագիրը կարող է կնքվել վարկի ամբողջ գումարի չափով կամ յուրաքանչյուր տրանշի համար առանձին,</p> <p>✓ Ցանկացած տրանշի վերջին մուծման օրը չի կարող ավելի ուշ լինել նախօրոք հաստատված վարկի ժամկետից: Առաջին և վերջին տրանշի միջև տրամադրման առավելագույն ժամկետը 6 ամիս է,</p>	
ԶԳՈՒՇԱՑՈՒՄ	Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ		
Վարկի նպատակ	Վարկը տրամադրվում է շրջանառու, հիմնական միջոցների համալրման, ինչպես նաև կապիտալ ներդրումների համար:	
	Վարկառուն վարկային միջոցները ստանալիս պետք է գործի իր անունից և իր օգտին: Արգելվում է վարկ վերցնել ի օգուտ երրորդ անձի:	
Վարկի տրամադրման ժամկետ	1-84 ամիս	
Վարկի տրամադրման եղանակ	Կանխիկ, անկանխիկ	
Վարկի մարման եղանակ	<p>✓ Անուիտետային ամենամսյա մարումներ (վարկը վճարվում է վարկի գումարի, տոկոսագումարի և սպասարկման գումարի (առկայության դեպքում) հանրագումարից կազմված հավասարաչափ մասերով): Առաջակվում է նաև վարկի մարման ձկուն ժամանակացույց հաշվի առնելով բիզնեսի առանձնահատկությունները:</p> <p>✓ Հաճախորդի բիզնեսի կամ տնտեսության սեզոնայնությունով պայմանավորված՝ վարկի արտոնյալ մարումներով ժամանակացույցի հնարավորություն (մինչև 9 ամիս), երբ արտոնյալ ամիսներին նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - միայն տոկոսագումարների և սպասարկման վճարների (առկայության դեպքում) վճարում, - գրոյական վճարումներ: 	
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		
Վարկի գումար	20 001 – 50 000 ԱՄՆ դոլար	50 001 – 150 000 ԱՄՆ դոլար
Վարկի ապահովման ձևերը	<p>✓ 36 ամիս և պակաս ժամկետով վարկերի համար գումարի նվազագույնը 50 %-ը պարտադիր պետք է ապահովվել անշարժ գույքով և/կամ փոխադրամիջոցով, իսկ գումարի մնացած մասը պետք է ապահովված լինի այլ շարժական գույքի գրավով:</p> <p>✓ 36 ամսից ավելի ժամկետով վարկերի համար գումարի նվազագույնը 70 %-ը պարտադիր պետք է ապահովվել անշարժ գույքով:</p>	<p>✓ 36 ամիս և պակաս ժամկետով վարկերի համար գումարի նվազագույնը 70 %-ը պարտադիր պետք է ապահովվել անշարժ գույքով և/կամ փոխադրամիջոցով, իսկ գումարի մնացած մասը պետք է ապահովված լինի այլ շարժական գույքի գրավով:</p> <p>✓ 36 ամսից ավելի ժամկետով վարկերի համար գումարի նվազագույնը 100 %-ը պարտադիր պետք է ապահովվել անշարժ գույքով և/կամ փոխադրամիջոցով:</p> <p>✓ 50 001 – 150 000 ԱՄՆ դոլարի չափով վարկերի դեպքում</p>

	<p>և/կամ փոխադրամիջոցով, իսկ գումարի մնացած մասը պետք է ապահովված լինի այլ շարժական գույքի գրավով:</p>	<p>գրավադրվող անշարժ գույքի և/կամ ավտոտրանսպորտային միջոց(ներ)ի գնահատումն իրականացվում է ՖԻՆՔԱ ՈՒՎԿ-ի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից:</p>
<p>Երաշխավորություն</p>	<p>✓ Բոլոր դեպքերում նվազագույնը 1 երաշխավոր պարտադիր է:</p> <p>✓ Իրավաբանական անձանց վարկավորման դեպքում ավելի քան 10% մասնաբաժին ունեցող հիմնադիրների երաշխավորությունը պարտադիր է</p>	
<p>ՀԱՎԵՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>		
<p>Վարկի վաղաժամկետ մարման պայմանները</p>	<p>Վարկառուն, առանց տուժանք վճարելու, իրավունք ունի վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի մարելու վարկը և կատարելու պայմանագրով նախատեսված պարտականությունները: Ընդ որում.</p> <p>✓ Վարկը վաղաժամկետ ամբողջական մարելու դեպքում Վարկառուն վճարում է վճարման օրվա դրությամբ վճարման ենթակա վարկի սպասարկման և այլ վճարները, հաշվեգրված տոկոսները, վարկը, եթե այլ գրավոր որոշում չի կայացվել Վարկատուի կողմից: Տվյալ դեպքում վաղաժամկետ մարման վճարի հաշվարկը կատարելիս վարկի մնացորդի մեջ չի ներառվում Վարկառուի Մարման ժամանակացույցով սահմանված առաջիկա մարման ենթակա մայր գումարի չափը: Վարկատուի կողմից վարկառուի վարկավորման դեպքում ընթացիկ վարկի վաղաժամկետ ամբողջական մարման պարագայում Վարկառուն վճարում է վճարման օրվա դրությամբ վճարման ենթակա սպասարկման և այլ վճարները, հաշվարկված տոկոսները և Վարկի մնացորդը:</p> <p>✓ Վաղաժամկետ մասնակի մարման պարագայում գանձվում է Վարկառուի Մարման ժամանակացույցով սահմանված առաջիկա մարման ենթակա ամբողջ գումարը, իսկ եթե կատարվող վճարումը գերազանցում է առաջիկա մարմանը ենթակա գումարի չափը, ապա այդ գերազանցող մասն ուղղվում է վարկի մարմանը, եթե այլ գրավոր որոշում չի կայացվել Վարկատուի կողմից:</p> <p>✓ Այն դեպքում, երբ գումարը չի բավարարում մարել առաջիկա մարման ամսաթվի բոլոր պարտքերը, ապա մարումը կատարվում է հետևյալ հերթականությամբ՝ 1. Սպասարկման և այլ վճարներ, 2. Տոկոսներ, 3. Վարկ</p> <p>✓ Վաղաժամկետ մասնակի մարում կատարելու դեպքում Վարկառուն իր ցանկությամբ կարող է վճարել մարման ժամանակացույցով սահմանված ապագա ամիսների գումարները: Տվյալ դեպքում կգանձվեն ապագա ամիսների սպասարկման և այլ վճարները, վճարման օրվա դրությամբ հաշվարկված տոկոսները, վարկի մնացորդային գումարի հանդեպ հաշվարկվող ապագա ամիսների տոկոսները, ապագա ամիսներին վճարվելիք վարկը, եթե այլ գրավոր որոշում չի կայացվել Վարկատուի կողմից: Տվյալ դեպքում ապագա ամիսների համար վճարվող վարկի մեջ չի ներառվում Վարկառուի Մարման ժամանակացույցով սահմանված առաջիկա մարման ենթակա մայր գումարի չափը:</p>	
<p>ՏՈՒԳԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՄԱՐ</p>	<p>! Վարկառուի կողմից մարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում վարկառուն պարտավորվում է վարկատուին վճարել տուժանք՝</p> <ul style="list-style-type: none"> • <i>յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց (չվճարված) վարկի գումարի նկատմամբ օրական 0.13%-ի չափով, և</i> 	

	<ul style="list-style-type: none"> • <i>յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց (չվճարված) տոկոսագումարի նկատմամբ օրական 0.13%-ի չափով:</i> <p>! <i>Վարկառուի կողմից վարկային պայմանագրի մարման ժամանակացույցով սահմանված Վարկի գումարի վճարման ժամկետները խախտելու (կետանցի) դեպքում պայմանագրով նախատեսված վարկի տարեկան տոկոսադրույքի հաշվարկումը ժամկետանց վարկի նկատմամբ դադարում է և վճարման ենթակա ժամկետանց վարկի գումարի նկատմամբ՝ կետանցի օրվանից մինչև վճարման ենթակա ժամկետանց վարկի փաստացի մարման օրը, սկսում է հաշվարկվել տոկոս՝ տարեկան 24 տոկոս (քսանչորս տոկոս) տոկոսադրույքի չափով:</i></p> <p><i>Վարկառուի կողմից վարկի և տոկոսների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության և վճարված գումարների անբավարարության դեպքում, պարտավորությունները մարվում են հետևյալ հերթականությամբ՝ առաջին հերթին մարվում են պարտավորության կատարման ստացմանն ուղղված վարկատուի ծախսերը, այնուհետև սպասարկման վճարները, հաշվեգրված տուժանքները, տոկոսները և վարկի գումարը:</i></p>
<p>Վարկ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ վարչության որոշմամբ սահմանված հետևյալ փաստաթղթերը</p>	<p>Իրավաբանական անձ.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Պետական գրանցման վկայական, Տնօրենի ներդիր, ✓ Հարկային կողմ՝ ՀՎՀՀ, ✓ Տնօրենի, բաժնետերերի անձնագրեր/ նույնականացման քարտեր, ✓ Վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններ, ✓ Լիազորված մարմնի որոշում վարկի համար դիմելու և (ընկերության գույքը որպես գրավ տրամադրելու) վերաբերյալ, ✓ Երաշխավորների անձնագրեր/ նույնականացման քարտեր, եկամտի /սեփականության վերաբերյալ փաստաթղթեր, ✓ Այլ փաստաթղթեր (Վարկային կոմիտեի պահանջով): <p>Անհատ ձեռնարկատեր.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Բիզնեսի Պետական գրանցման վկայական, ✓ Վարկառուի և երաշխավորի անձնագիր/նույնականացման քարտ, ✓ Անուսնության վկայական (առկայության դեպքում), ✓ Այլ փաստաթղթեր (ՎԿ-ի պահանջով):
<p>Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը</p>	<p>Վարկային հայտի վերաբերյալ կազմակերպությունը որոշում է կայացնում առավելագույնը 14 օրյա ժամկետում, տեղեկացնում է այդ մասին հայտ ներկայացնողին առավելագույնը 2 օրում, իսկ վարկը վարկառուին փաստացի տրամադրում է հայտը ներկայացնելու պահից առավելագույնը 30 օրում :</p>
<p>Վարկի տրամադրման դրական որոշման համար անհրաժեշտ գործոններ</p>	<p>Վարկառուն պետք է</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ունենա սեփական բիզնես գործունեություն և/կամ այլ կանոնավոր եկամտի աղբյուր (օր. վարձու աշխատանք), որը բավարարում է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ- ի կողմից սահմանված չափանիշներին, ✓ Բավարարի առկա գործունեության վերլուծության և վճարունակության գնահատման արդյունքների համար «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից սահմանված ֆինանսական չափանիշների գործակիցներին, ✓ Չունենա ժամկետանց պարտավորություններ, վարկային պատմությունը բավարարի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից սահմանված ընդունելի որակական չափանիշներին,

	<p>✓ Համապատասխանի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ներքին իրավական ակտերով սահմանված այլ չափանիշներին:</p>
Վարկի մերժման գործոններն են	<p>✓ Վարկառուի՝ վարկի տրամադրման դրական որոշման համար անհրաժեշտ գործոններին չբավարարելու դեպքում, ✓ եթե հաճախորդի կողմից չեն ներկայացել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և այլ հիմնավորումները, ✓ եթե վարկավորումը չի համապատասխանում «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի առաքելությանը, ✓ եթե հաճախորդը զբաղվում է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից չֆինանսավորվող գործունեության տեսակներով (տե՛ս «Կազմակերպության կողմից չֆինանսավորվող գործունեության տեսակները» փաստաթուղթը՝ ծառայություններ էջում), ✓ եթե հաճախորդը ՖԻՆՔԱ-ում կամ այլ ֆինանսական կազմակերպություններում ունի և կամ ունեցել է վարկային պարտավորություններ, որոնք սպասարկվել են անթույլատրելի ուշացումներով և կամ խախտումներով, և հաճախորդը դիտարկվում է որպես անպարտաճանաչ վարկառու, ✓ եթե վարկառուի ֆինանսական վիճակը չի բավարարում «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի սահմանած նվազագույն չափանիշներին, ✓ եթե չեն պահպանվել հաճախորդի ընտրության համար սահմանված կանոնները, ✓ վարկային կոմիտեն չի բավարարել վարկային հայտը՝ հաշվի առնելով գործարքի ռիսկայնությունը կամ առկա այլ վարկային ռիսկերը, վարկային կոմիտեի իրավասությամբ սահմանված այլ դեպքերում:</p>
ԶԳՈՒՇԱՑՈՒՄ	<p><i>Այս վարկատեսակի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել ՖԻՆՔԱ-ի կողմից:</i></p>
	<p>! ՖԻՆՔԱ-ն իրավունք ունի վարկի տոկոսադրույքը միակողմանի կարգով փոփոխել՝ վարկառուի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման դեպքում, պայմանագրով և պայմանագրի անբաժանելի մասը կազմող պայմաններով նախատեսված դեպքերում և կարգով,</p>
	<p>! Վարկի տոկոսադրույքի հաշվարկային դրույքը ենթակա է փոփոխման մինչև «+5» տոկոսային կետով, բայց ոչ ավել, քան ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը,</p>
	<p>! Փոփոխության վերաբերյալ վարկատուն ծանուցում է վարկառուին տվյալ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) աշխատանքային օր առաջ,</p>
	<p>! Չեր գույքը (տուն, մեքենան և այլն) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե Դուք ժամանակին չկատարեք Չեր վարկի տոկոսագումարների և վարկի գումարի մարումները,</p>
	<p>! Չեր կողմից տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամկետին չվճարելու դեպքում Չեր մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում,</p>
	<p>! Գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում Չեր վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում պարտավորությունները մարվում են Չեր այլ գույքի հաշվին</p>
Վարկի տրամադրման վայր	Վարկը կարող է ձևակերպվել ՖԻՆՔԱ-ի ցանկացած մասնաճյուղում:

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար՝ տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:
 Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կախված է վարկի պայմաններից (գումար, ժամկետ, վարկի մարմանն ուղղված վճարների գումար և մարումների քանակ)

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

A վարկի գումարը (վարկատուի կողմից վարկառուին տրամադրված վարկի սկզբնական գումարը)

n վարկի մարմանն ուղղված վճարի թիվը

N վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

Kn վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

Dn վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

Վարկի գումար	70 000 ԱՄՆ դոլար
Անվանական տարեկան տոկոսադրույք	14%
Վարկի ժամկետ	60 ամիս
Վարկի տրամադրման միանվագ վճար	վարկի գումարի 1.3%
Սպասարկման ամենամսյա վճար	0,1%
Մարումներ	ամենամսյա հավասարաչափ մարումներ (մայր գումարը և տոկոսները միասին)
Վարկի տրամադրման օր	01 նոյեմբեր 2019 թ.
Առաջին մարման օր	01 դեկտեմբեր 2019 թ.
Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 17,9 %	